

## Հայտարարություն

### Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանը հայտարարում է մրցույթ՝ քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնն զբաղեցնելու մասին

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանը հայտարարում է **արտաքին մրցույթ՝** Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 97-1.5-Մ2-1) քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնն զբաղեցնելու համար:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 97-1.5-Մ2-1) պաշտոնի բնութագրի, պաշտոնն զբաղեցնող քաղաքացիական ծառայողի համար սահմանված գործառույթների, իրավունքների, պարտականությունների, պաշտոնին ներկայացվող պահանջների՝ պաշտոնի համար պահանջվող կրթության, աշխատանքային ստաժի, աշխատանքի բնագավառում փորձի, մասնագիտական գիտելիքների, կոմպետենցիաների, ինչպես նաև աշխատանքի կազմակերպման լիազորությունների և ղեկավարման շրջանակների մասին տեղեկատվությունը ներառված է պաշտոնի անձնագրում, որի էլեկտրոնային օրինակը *կցվում է:*

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 97-1.5-Մ2-1) քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթին մասնակցել ցանկացող **ՀՀ քաղաքացիները պետք է անձամբ ՀՀ Սյունիքի մարզպետարան (ք. Կապան, Նժդեհի 1) ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝**

1. դիմում՝ (Ձև 1՝ լրացվում է տեղում)։
2. անձնագիր և/կամ նույնականացման քարտ՝ պատճեններով (եթե անձը նույնականացման կամ սոցիալական քարտ չի ներկայացնում, ապա անհրաժեշտ է ներկայացնել անձին հանրային ծառայության համարանիշ տրամադրելու մասին տեղեկանք կամ հանրային ծառայության համարանիշի տրամադրումից հրաժարվելու մասին տեղեկանք՝ պատճեններով)։
3. բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ՝ պատճենով։
4. աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթուղթ՝ պատճենով։
5. արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայական՝ պատճենով, կամ համապատասխան տեղեկանք։
6. մեկ գունավոր լուսանկար՝ 3x4 սմ չափսի։

Մրցույթին մասնակցելու համար դիմումներն ընդունվում են 2020 թվականի մարտի 5-ից մինչև 2020 թվականի մարտի 16-ը ներառյալ՝ աշխատանքային օրերին: Դիմումները յուրաքանչյուր աշխատանքային օր ընդունվում են ժամը 10:00-ից 12:30-ը և 14:30-ից 17:00-ը:

Մրցույթի **թեստավորման փուլը** կանցկացվի 2020 թվականի ապրիլի 21-ին՝ ժամը 15:00-ին, ՀՀ Սյունիքի մարզպետարանի վարչական շենքում (հասցե՝ ք. Կապան, Նժդեհի 1):

Մրցույթի **հարցազրույցի փուլը** կանցկացվի 2020 թվականի ապրիլի 23-ին՝ ժամը 15:00-ին, ՀՀ Սյունիքի մարզպետարանի վարչական շենքում (հասցե՝ ք. Կապան, Նժդեհի 1):

Մրցույթի **հարցազրույցի փուլը** կանցկացվի «Հարցարան» և «Արդի հիմնախնդիրներ» ձևաչափերով:

**Հիմնական աշխատավարձը՝** 212309 (երկու հարյուր տասներկու հազար երեք հարյուր իննը) դրամ:

Նշված պաշտոնին հավակնող անձը պետք է լինի բարեկիրթ, պարտաճանաչ, հավասարակշռված, գործնական, ունենա նախաձեռնողականություն և պատասխանատվության զգացում:

Թեստում ընդգրկվող մասնագիտական գիտելիքների վերաբերյալ թեստային առաջադրանքները կազմված են հետևյալ բնագավառներից՝

- Սահմանադրություն. հոդվածներ՝ 1, 10, 14, 15, 20, 27, 40, 57.  
հղումը՝ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=102510>
- «Քաղաքացիական ծառայության մասին» օրենք. հոդվածներ՝ 4, 6, 10, 12, 20, 24.  
հղումը՝ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=138910>
- «Սոցիալական աջակցության մասին» օրենք. գլուխ 1, հոդված 2, գլուխ 2, հոդված 6, գլուխ 2, հոդված 16,17, գլուխ 4, հոդված 23,24, գլուխ 5, հոդված 25,26, գլուխ 8, հոդված 38  
հղումը՝ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=139019>
- «Պետական նպաստների մասին» օրենք. գլուխ 1, հոդված 2,3,4,6,7,8, գլուխ 2, հոդված 10,11,12, գլուխ 3, հոդված 15, գլուխ 5, հոդված 22, գլուխ 9, հոդված 37  
հղումը՝ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=137386>
- «Պետական կենսաթոշակների մասին» օրենք. գլուխ 1, հոդված 3,7, գլուխ 6, հոդված 33  
հղումը՝ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=139119>
- «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» գլուխ 1, հոդված 6, գլուխ 2, հոդված 10, գլուխ 3, հոդված 14, գլուխ 4, հոդված 20,  
հղումը՝ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=120993>
- «Զբաղվածության մասին» օրենք. գլուխ 1, հոդված 4, գլուխ 2, հոդված 9, գլուխ 3, հոդված 3,11,13,14,15, գլուխ 7, հոդված 26,  
հղումը՝ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=138920>
- Ինֆորմատիկա 7-րդ դասարան: Դասագիրք հանրակրթական դպրոցի համար:  
Ս.Ս.Ավետիսյան, Ա.Վ.Դանիելյան: Մասնագիտական խմբագիր՝ Ռ.Վ. Աղաջյան: Երևան  
2012.: § 1.1-1.3, § 2.1-2.3, § 3.1, § 3.3, §3.4, § 5.2, §5.6, §6.1-6.3

հղումը՝ <http://fliphtml5.com/fumf/egdx>

Թեստում ընդգրկվող կոմպետենցիաների վերաբերյալ թեստային առաջադրանքները կազմված են տվյալ պաշտոնի համար սահմանված և Հայաստանի Հանրապետության կառավարության պաշտոնական ինտերնետային կայքէջում՝ <https://www.gov.am/am/announcements/item/346/> հրապարակված ընդհանրական կոմպետենցիաներից, մասնավորապես՝

- «Խնդրի լուծում»  
Հղումը՝ [https://www.gov.am/u\\_files/file/Haytararutyunner/4.pdf](https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/4.pdf)
- «Հաշվետվությունների մշակում»  
Հղումը՝ [https://www.gov.am/u\\_files/file/Haytararutyunner/6.pdf](https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/6.pdf)

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները մրցույթի վերաբերյալ հարցերի և լրացուցիչ տեղեկությունների համար կարող են դիմել ՀՀ Սյունիքի մարզպետարանի անձնակազմի կառավարման բաժին (հասցե՝ ք. Կապան, Նժդեհի 1), հեռախոսահամար՝ (0285)4-42-75, էլ.փոստի հասցե՝ [syunik.anznakazm@mail.ru](mailto:syunik.anznakazm@mail.ru):

## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ

#### 1. Ընդհանուր դրույթներ

##### 1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի (այսուհետ՝ Մարզպետարան) առողջապահության և սոցիալական ապահովության վարչության (այսուհետ՝ Վարչություն) սոցիալական ապահովության բաժնի (այսուհետ՝ Բաժին) գլխավոր մասնագետ (այսուհետ՝ Գլխավոր մասնագետ) (ծածկագիր՝ 97-1.5-Մ2-1):

##### 1.2. Ենթակա և հաշվետու է

Գլխավոր մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

##### 1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի պետը կամ Բաժնի ավագ մասնագետներից մեկը:

##### 1.4. Աշխատավայրը

Հայաստանի Հանրապետություն, Սյունիքի մարզ, ք. Կապան, Նժդեհի 1:

#### 2. Պաշտոնի բնութագիրը

##### 2.1 Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

- իրականացնում է մարզի տարածքում սոցիալական ապահովության բնագավառում պետական միասնական քաղաքականության ապահովմանն ուղղված աշխատանքներ.
- իրականացնում է բնակչության պետական սոցիալական ապահովության ծրագրերի իրագործմանն ուղղված աշխատանքներ.
- իրականացնում է մարզային ենթակայության սոցիալական ապահովության հաստատությունների և կազմակերպությունների գործունեության ապահովմանն ուղղված աշխատանքներ.
- իրականացնում է վերահսկողություն մարզային ենթակայության սոցիալական ապահովության հաստատությունների և կազմակերպությունների գործունեության՝ օրենսդրության համապատասխանության նկատմամբ.
- իրականացնում է սոցիալական աջակցության կարիք ունեցող բնակչության հաշվառման աշխատանքներ.
- իրականացնում է աջակցություն գործազուրկների հաշվառման և բնակչության զբաղվածության հետ կապված խնդիրների լուծմանը.
- իրականացնում է աջակցություն պետական կենսաթոշակների և նպաստների նշանակման ու վճարման կազմակերպման աշխատանքներին.
- իրականացնում է աջակցություն մարզային ենթակայության սոցիալական ապահովության

հաստատությունների պահպանման ու շահագործման աշխատանքներին.

9. իրականացնում է աջակցություն սոցիալական ապահովության խնդիրներ իրականացնող հասարակական կազմակերպությունների գործունեությանը.
10. իրականացնում է սոցիալական աջակցության տարածքային գործակալություններին կից գործող համակարգող խորհրդների գործունեության աջակցման աշխատանքներ.
11. սահմանված կարգով նախապատրաստում է հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի նիստերի նյութերը և կազմում արձանագրությունները.
12. իրականացնում է մասնակցություն մարզում հաշմանդամության իրավիճակի վերաբերյալ տարեկան հաշվետվությունների մշակման աշխատանքներին.
13. իրականացնում է մասնակցություն մարզի հաշմանդամներին պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաներով ապահովման աշխատանքներին.
14. իրականացնում է համագործակցություն հաշմանդամների և տարեցների հիմնահարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների հետ:

### **Իրավունքներ՝**

- ստանալ համապատասխան տեղեկատվություն մարզի սոցիալական աջակցության տարածքային գործակալություններից.
- ներկայացնել առաջարկություններ Բաժնի պետին հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և շահերի պաշտպանության ընթացքում ծագած խնդիրների քննարկմանը համապատասխան պետական կառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների, տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներին մասնակից դարձնելու վերաբերյալ.
- հանրապետական գարծադիր մարմիններից ստացված տեղեկատվական բազաների համադրման արդյունքները ներկայացնել մարզի սոցիալական աջակցության տարածքային գործակալություններին և նրանց կողմից ճշգրտված համադրման արդյունքները ամփափել և հաշվետվության տեսքով հանձնել Բաժնի պետին՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ներկայացնելու նպատակով.
- այլ մարմիններից, պաշտոնատար անձանցից ստանալ Բաժնի առջև դրված գործառույթների և խնդիրների իրականացման հետ կապված անհրաժեշտ տեղեկատվություն և նյութեր.
- համագործակցել սոցիալական ապահովության խնդիրներ իրականացնող հասարակական կազմակերպությունների հետ.
- ներկայացնել առաջարկություններ Բաժնի պետին՝ սոցիալական աջակցության տարածքային գործակալություններին կից գործող համակարգող խորհուրդների կազմերում փոփոխություններ կատարելու վերաբերյալ:

### **Պարտականությունները՝**

- նախապատրաստել Բաժնի առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծեր, առաջարկություններ, եզրակացություններ, այլ փաստաթղթեր, ինչպես նաև դրանց վերաբերյալ մշակել մեթոդական պարզաբանումներ և ուղեցույցներ.
- Բաժնի պետի հանձնարարությամբ կատարել քաղաքացիների ընդունելություն.
- մասնակցել Բաժնի աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին.
- Բաժնի պետին ըստ անհրաժեշտության, ներկայացնել համապատասխան զեկուցումներ սպասարկվող ոլորտին առնչվող աշխատանքների վիճակի մասին.
- Բաժնի լիազորությունների շրջանակներում նախապատրաստել առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և ներկայացնել Բաժնի պետին.
- իրականացնել սոցիալական բնագավառին վերաբերվող օրենքների և օրենքների կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտերի դրույթներից բխող գործառույթների կատարումը.
- ուսումնասիրել Մարզպետարան դիմած կարիքավոր բնակիչների դիմումները և

համապատասխան եզրակացություն ներկայացնել Բաժնի պետին.

- իրականացնել հրատապ օգնություն ստանալու կարիք ունեցող ընտանիքների հաշվառումը և ցուցակները ներկայացնել մարզի ՍՍԳ-ներին.
- աշխատանքի տեղավորման հարցով մարզպետարան դիմած քաղաքացիների դիմումները հաշվառել և ներկայացնել Բաժնի պետին՝ մարզի զբաղվածության կենտրոններ ներկայացնելու նպատակով.
- մասնակցել վարձատրվող հասարակական աշխատանքների և սեզոնային զբաղվածության ծրագրերի իրագործմանը.
- համապատասխան պարզաբանումներ տալ բնակչությանը կենսաթոշակային ապահովության օրենսդրության վերաբերյալ:

### **3. Պաշտոնին ներկայացվող պահանջներ**

#### **3.1. Կրթություն, որակավորման աստիճանը**

Բարձրագույն կրթություն

#### **3.2. Մասնագիտական գիտելիքները**

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

#### **3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը**

Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ պետական սոցիալական և կենսաթոշակային ապահովության բնագավառում չորս տարվա աշխատանքային ստաժ:

#### **3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ**

##### **Ընդհանրական կոմպետենցիաներ՝**

1. Ծրագրերի մշակում
2. Խնդրի լուծում
3. Հաշվետվությունների մնշակում
4. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
5. Բարեվարքություն

##### **Ընտրանքային կոմպետենցիաներ՝**

1. Կոնֆլիկտների կառավարում
2. Հասարակության հետ կապերի ապահովում
3. Տեղեկատվական տեխնոլոգիաներ և հեռահաղորդակցություն
4. Ծառայությունների մատուցում
5. Բողոքների բավարարում
6. Ժամանակի կառավարում
7. Փաստաթղթերի նախապատրաստում

### **4. Կազմակերպական շրջանակը**

#### **4.1 Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը**

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության անմիջական արդյունքի համար:

#### **4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները**

Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված մասնագիտական եզրակացությունների տրամադրման կամ դիմումների քննարկման արդյունքում որոշումների նախապատրաստման և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում որոշումների կայացման շրջանակներում:

### **4.3. Գործունեության ազդեցությունը**

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման համար մասնագիտական գործունեության տարածքային ազդեցություն:

### **4.4. Շփումները և ներկայացուցչությունը**

Իր իրավասությունների շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի ներսում այլ կառուցվածքային ստորաբաժանումների, այլ մարմինների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ձևավորված աշխատանքային խմբերում:

### **4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը**

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը:

**ԹԵՍԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱԼՔՆԵՐԻ ՁԵՎԵՐԸ**

Թեստային առաջադրանքի ձևերը		
1. Ճիշտ պատասխանի ընտրություն	Նշեք ճիշտ պատասխանը	Ում կողմից է հաստատվում համայնքի բյուջեն. Ա. Համայնքի ղեկավարի Բ. Համայնքապետարանի աշխատակազմի Գ.Համայնքի ավագանու
2. Այլընտրանքային ընտրություն	Պատասխանեք «Այո» կամ «Ոչ»	Հիմնադիրն իրավունք ո՞ւնի հետ վերցնել իր կողմից պետական կազմակերպությանն ամրացված գույքը: «այո» «ոչ»
3. Համապատասխանության որոշում	Դասավորեք ըստ համապատասխանության՝ ձախ սյունակի բառերին համապատասխան աջ սյունակի հայերեն համարժեքները:	1. Պրեզենտացիա Ա. Շնորհանդես 2. Մենեջմենթ Բ.Ազատականություն 3. Տոտալիտարիզմ Գ. Ամբողջատիրություն 4. Լիբերալիզմ Դ. Կառավարում  Պատասխան՝ 1) 1-Ա, 2-Բ, 3-Դ, 4-Գ 2) 1-Դ, 2-Ա, 3-Գ,4-Բ 3) 1-Ա, 2-Դ, 3-Գ, 4-Բ 4) 1-Բ, 2-Գ, 3-Դ, 4-Ա
4. Հաջորդականության որոշում	Դասավորեք ճիշտ հերթականությամբ	Նշված բառերը դասավորել ըստ այբբենական կարգի Ա. արծաթագոծ, Բ.արծաթել, Գ.արմավենի, Դ. արճճե, Պատասխան՝ 1) Ա, Բ, Դ, Գ 2) Ա, Դ, Գ,Բ 3) Ա,Բ,Գ,Դ 4) Ա., Գ., Բ., Դ